

Պ-532-23.05.2014-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ **1.9-րդ և 1.10-րդ** կետերով.

«1.9) սովորող՝ սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված և կրթական հիմնական ծրագրով (երով) ուսումնառող անձ.

1.10) կրթության որակ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ **համաձայն սահմանված չափանիշների»**.

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ կետով

2.1) սահմանում է կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ ուղղությունների: Պրանք կարող են հիմք հանդիսանալ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները սահմանելու համար:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԹԵՐԹ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ ընթերցման ներկայացված օրենքի նախագծի առաջարկությունների վերաբերյալ

	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Հեղինակի եզրակացությունը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1.1-րդ կետ	1.Հանել «համապատասխան» բառը	Ընդունվել է
2.			2.Գործող օրենքի 3-րդ հոդվածում արդեն առկա են 1.1 և 1.2 կետեր	Ընդունվել է, կատարվել է տեխնիկական շտկում
3.		Նախագծի 1-ին հոդված, 1.2.-րդ կետ	Հանել՝ «Կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ թվարկված ուղղությունների, սահմանում է կրթության պետական կառավարման լիազորած մարմինը» բառերը, նկատի ունենալով, որ նպատակահարմար չէ օրենքում գործածվող հասկացություններում սահմանել պետական մարմնի իրավասություն:	Ընդունվել է, կատարվել է խմբագրական աշխատանք, դրույթը ամրագրվել է լիազոր մարմնի իրավասություն-ները սահմանող 37-րդ հոդվածում՝ ձևակերպելով որպես նախագծի 2-րդ հոդված:
4.			«Կրթության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ հոդվածի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ մասնագիտական կրթության հավաստարմագրման չափանիշները, որոնք ընդհանուր առմամբ ընդգրկում են նախատեսված բաղադրիչները:	Հաշվի է առնվել, բայց կրթության որակի բաղադրիչները վերաբերում են կրթության բոլոր համակարգերին, իսկ հավատարմագրման չափանիշները միայն մասնագիտական կրթությանը: Թրվել է համապատասխան ձևակերպում, որը կկարգավորի հակասությունների խնդիրը: